



ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵԼԵԿՄՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
Զորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ
հեռ. (+374) 25324114, 91199324
էլ. փոստ info_alaverdi@aarhus.am
anushevoyan@rambler.ru

Lori, Alaverdi,
Zoravar Andranik str.8/1, 403
Tel. (+374) 25324114, 91199324,
E-mail info_alaverdi@aarhus.am
anushevoyan@rambler.ru

ՀՀ Լոռու մարզի Ճոճկան
Համայնքի ղեկավար
Պարոն Ա. Թամազյան

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Թամազյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Արդյո՞ք համայնքին դիմում է ներկայացվել Ախթալայի ԼՀԿ-ի նոր պոչամբարի կառուցման համար հողահատկացում կատարել:
2. Ե՞րբ է դիմում ներկայացվել և ու՞մ կողմից:
3. Խնդրում եմ կից ներկայացնել նշված դիմումների պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող  Անուշ Էվոյան

29.03.2015